

**ԵՐԵՎԱՆԻ «ՄԻՆԻԹԱՐ ՍԵԲԱՍՏԱՑԻ» ԿՐԹԱԳԱՄԱԼԻՐ**

**2004-2008թթ կրթահամալիրի զարգացման ծրագիր**

**«Ուսուցողական նոր միջավայր: Անհատականացված ուսուցում: Ստեղծողների դպրոց»**

**Կրթական ծրագիր**

**1. Իրավիճակի նկարագրությունը**

Այսօր գործող պետական հանրակրթական դպրոցը ո՛չ ապագային է ուղղված, ո՛չ ներկային. այն անցած ժամանակի՝ ավանդական դպրոցի իներցիան է նոր ժամանակում: Այդ դպրոցի օրինակելի, այսինքն՝ առավել հարմար աշակերտի տարբերակիչ հատկանիշը ուսուցչի պատմածը մտապահելու և գնահատական ստանալու համար մեխանիկորեն վերարտադրելու կարողությունն է համարվում: Այսօրվա դպրոցը «ժամային ուղղիչ տուն է», որտեղ ուսուցչի դերը պետական ծրագրերով որոշված գիտելիքները «փաթեթավորված» վիճակում բարեխիղճ փոխանցելն է՝ այս դասին այսքան գիտելիք այս առարկայից: Տեսականացված ուսուցման միջոցով սովորողին է փոխանցվում հիմնականում կենսական պահանջարկ չունեցող գիտելիք, իսկ իրական կյանքը գնում է իր հունով:

Գործող պետական դպրոցի ուսուցիչն ունի ազատություն, որի իրագործումից ինքը վախենում է. ուսուցիչն օգտվում է հանրակրթության վիճակի, կրթության բարեփոխումների (փոփոխությունների) որակի համար պատասխանատվություն չվերցնելու ազատությունից:

Այսպես մասնագետների անգործություն է հաստատվել, և կրթության բարեփոխման (փոփոխության) գաղափարը միայն դրսից է՝ միաժամանակ բոլոր դպրոցների համար, բարեփոխման ծրագրի իրագործման ընթացքում ուսուցիչը նորից չի մասնակցում նրա շտկմանը, լրացմանն ու ամբողջացմանը:

Գործող դպրոցական կազմակերպումը, ուսուցիչն ու երեխան հարկադրված են ենթարկվելու դպրոցական ծրագրերի պահանջներին, ծրագրեր, որոնք կոնկրետ երեխայի (երեխաների խմբի) համար ուսուցիչը չի ստեղծել, ծրագրեր, որոնք կոնկրետ երեխայի (երեխաների կամավոր ընտրված խմբի) պահանջներին բավարարման իրագործումներ չեն: Ուսուցիչը վճարվում է միայն դասատվության համար, իր մանկավարժական աշխատանքի ընթացքում նա հետազոտական աշխատանք չի կատարում: Ուսուցիչը մասնագիտական զարգացմամբ զբաղվում է դեպքից դեպք, ոչ որպես անընդհատ ինքնակրթություն, այլ որպես վերևներից («դրսից») պարտադրված միջոցառում: Գործող դպրոցում երեխայի հետաքրքրությունների (նախասիրությունների) մասին ընդամենը խոսում են որպես մանկավարժական պրոբլեմի. մանկավարժական մեթոդի հարցը չի հանգում երեխայի ուժերի և հետաքրքրությունների զարգացմանը:

**Սրան մենք անվանում ենք «սպառողների» դպրոց և փաստում՝ սպառողների դպրոցը մեռած է, և անհմատ է ձևացնել, թե դեռ կենդանի է, ու հնարավոր է նրան փրկել:**

Նոր, կենդանի դպրոցը միայն ստեղծողների դպրոցը կարող է լինել, դպրոց, որտեղ ստեղծագործ անհատականության զարգացումը, նրա հետաքրքրությունների բավարարումը առաջին տեղում կլինեն: Դպրոց, որտեղ ուսման համար ամենալավ շարժառիթը հետաքրքրությունն է, որը սովորողի մոտ առաջացնում է ուսումնասիրվող նյութը, որտեղ ինչ-որ բան ուսումնասիրում են այն ինքնուրույն հայտնաբերելու ճանապարհով, իսկ լարված մտավոր գործունեության համար լավագույն պարգևը այդ գործունեությունից ստացած բավականությունն է: Դպրոց, որտեղ մանկան կյանքը վերացական հասկացությունն է (30

հոգիանոց կոլեկտիվի անդամ), այլ առանձին - առանձին երեխաների կյանք, որտեղ ուսուցչի համար մեկ իրական դրսևորում կա՝ ապրող անհատը: Դպրոց, որտեղ կրթվողները միմյանցից անջատ դիտվող առանձին անհատներ են, և երեխայի հիմնական պահանջունքները (հետաքրքրությունները), դրանց զարգացումն ու պահպանումը կորոշեն երեխայի և՛ ֆիզիկական, և՛ մտավոր աշխատանքը, ուսումնական առարկաներն ու դասընթացները, հմտությունների և գիտելիքների ձեռքբերման համակարգը, ուսուցման եղանակները: Սա ենթադրում է կրթահամալիրի, նրա կազմում գործող հանրակրթական ու նախասիրական դպրոցների, մանկավարժական ուսումնարանի, ուսումնական կենտրոնների (մասնաճյուղեր), կրթահամալիրի իրականացրած կրթական ծրագրերի մանկավարժական, տեխնիկական և նյութական (ֆինանսական) նոր կազմակերպում:

## 2. Կրթական ծրագրի նպատակը

«Ուսուցողական նոր միջավայր: Անհատականացված ուսուցում: Ստեղծողների դպրոց»: Սրան է կոչված կրթական ծրագիրը, «Նոր դպրոց» պայմանական անվամբ:

Մենք գիտենք, որ ավելի հեշտ է նոր դպրոց ստեղծել, քան փոխել եղածը:

ՀՀ կրթության և գիտության նախարարության «Մխիթար Սեբաստացի» փորձարարական-հետազոտական միավորումում (այսուհետ՝ կրթահամալիր) 2001թ. սեպտեմբերից աշխատում են «Նոր դպրոց» կրթական ծրագրի (այսուհետ՝ կրթական ծրագիր) նախապատրաստման վրա: Ստեղծվեց ծրագրի հիմնադրույթների փորձարկման հաստատությունը՝ մոդել-դպրոցը, կրթահամալիրի հետազոտական-մեթոդական կենտրոնում ստեղծվեց կրթական ծրագրի հիմնադրույթներով զբաղվող խումբ: 2003թ. սեպտեմբերից կրթական ծրագրի մշակումն ու իրագործումը դարձավ կրթահամալիրի բարեփոխման ծրագիրը:

**Կրթական ծրագիրը կրթահամալիրում 1987թ. մշակվող-փորձարկվող կրթահամալիրին կանոնադրությամբ արտոնված հեղինակային (պետական այլընտրանքային) մանկավարժության իմաստավորումն է, դրա արդիականացումն ու արդյունավետ իրագործումը, կրթահամալիրի կանոնադրությամբ որոշված՝ կրթահամալիրի ազատության ու պատասխանատվության իրագործումը:**

Կրթական ծրագիրը՝ որպես համակարգ, կապահովի հայաստանյան նոր իրականությանը համապատասխանող՝

1. մինչև 5 տարեկանների բազմաֆունկցիոնալ, նոր որակի մանկապարտեզի գործարկումը,
2. 5 տարեկանների մեկամյա կրթական նոր ծրագրի ստեղծումն ու իրագործումը (դպրոց-պարտեզ),
3. 2-ից 12 տարեկանների կրթության նոր հաստատության՝ դպրոց-մանկապարտեզի գործունեությունը,
4. 6-ամյա նոր կրտսեր դպրոցի կայացումը,
5. ընդհանուր և մասնագիտական դասընթացներ ապահովող նոր որակի քառամյա (հետագայում 6-ամյա) միջնակարգ ավագ դպրոցի գործունեությունը,
6. նախադպրոցական դաստիարակության, 5 տարեկանների դպրոց-պարտեզի և 6-ից 12 տարեկան երեխաների դպրոցական կրթության ծրագիրը յուրացրած ուսուցիչների պատրաստման մանկավարժական հաստատության գործունեությունը: ՀՀ

կառավարությունը 2003թ. փետրվարի 27-ի թիվ 361-Ն որոշմամբ վերակազմակերպեց կրթահամալիրը: ՀՀ ԿԳ նախարարի 25.04.2003թ. թիվ 259-Ն հրամանով հաստատագրված կրթահամալիրի կանոնադրությունը 28.04.2003թ. պետական գրանցում ստացավ: Կրթական ծրագրի հավելվածով 1-ով ներկայացված կրթահամալիրի առարկան ու նպատակները, խնդիրները, կառուցվածքը: Հավելված 2-ով ներկայացված է Տեղեկանք կրթահամալիրի մանկավարժական նորարական գործունեությունն անցած 15 տարիների (1989-2004թթ) մասին:

### **3. Կրթական ծրագրի էությունը**

Կրթական ծրագիրը ներառում է հանրակրթությունը երկու աստիճանակարգով՝ 6-ից 12 տարեկանների կրտսեր դպրոց (1-ից 6-րդ դասարաններ), քառամյա (հետագայում 6-ամյա) ավագ դպրոց՝ 7-ից 10-րդ դասարաններ (հետագայում 7-ից 12-րդ դասարաններ): Կրտսեր դպրոցի կազմում գործում են (կարող են ստեղծվել) 2-ից 5 տարեկան երեխաների մանկապարտեզային խմբեր: Հինգ-վեց տարեկան երեխաների համար գործում է դպրոց-պարտեզ, որտեղ իրագործվում է մեկամյա կրթական ծրագիր: Կրտսեր դպրոցը 6-ամյա է. այն ներառում է տարրական ուսուցման 4 տարին և միջին դպրոցի 5-6-րդ դասարանները: Կրտսեր դպրոցում սովորում է յուրաքանչյուր ոք, դպրոցի, ուսուցման ծրագրի իր ազատ ընտրությամբ: Կրտսեր դպրոցը երեխայի ազատության, ինքնուրույնության, ինքնավստահության հաստատման, նրա նախասիրությունների բացահայտման, զարգացման՝ ինքնիրագործման դպրոց է, որտեղ 1-ին տեղում ստեղծագործելն է, երեխայի ստեղծական մղումի խթանումը: Կրտսեր դպրոցի սովորողների նախասիրությունը կզարգացվի ինչպես խորացված ուսուցմամբ դասարանների, այնպես և երեխայի ընտրած նախասիրական պարապմունքների միջոցով (շաբաթական 4 ժամի սահմաններում): Ծնողի ցանկությամբ և նրա նյութական աջակցությամբ կարող են գործել փոքրաքանակ դասարաններ կամ առանձին ուս. պարապմունքներ կազմակերպվեն փոքրաքանակ խմբերով:

Ավագ դպրոցը կազմված է պարտադիր հանրակրթություն իրականացնող դասարաններից և մասնագիտացված դասընթացներից և ունի երկու մակարդակ՝ 7-8-րդ դասարաններ (12-ամյա դպրոցի դեպքում՝ 7-9-րդ դասարաններ) և 9-10-րդ դասարաններ (12-ամյա դպրոցի դեպքում՝ 10-12-րդ դասարաններ): Կրթական ծրագրով վարժարանը և արհեստագործական դպրոցը՝ որպես միջնակարգ կրթության ավագ դպրոցների տիպեր, հնարավորություն են տալիս 6-րդ դասարանն ավարտած երեխաներին և նրանց ծնողներին ընտրելու քառամյա հետևողական ծրագիր, խթանում են միջնակարգ կրթության հետագա տարբերակումը և համապատասխանեցումը աշակերտների անհատական կարիքներին ու պահանջներին: Նախատեսվում է 2005-2006 ուսումնական տարվանից հիմնական կրթություն ստացած երեխաներից ձևավորել նախամասնագիտական միջին մասնագիտական ծրագրերով գործող ավագ դպրոցի դասարաններ: Մինչ այդ կրթահամալիրը սահմանված կարգով կավելացնի 8-ամյա կրթության հիմքով միջին մասնագիտական կրթությամբ մասնագիտությունների քանակը:

Ավագ դպրոցի դասարանի ձևավորման կարգը դասարանը նախաձեռնողի կամ վարժարանի, արհեստագործական դպրոցի տնօրենի ներկայացմամբ հաստատում է

կրթահամալիրի խորհուրդը: Վարժարանում և արհեստագործական դպրոցում սովորողների և դպրոցի հարաբերությունները կարգավորվում են պայմանագրի հիման վրա: Պայմանագրին կցվում են կրթահամալիրի խորհրդի հաստատած դասարանի աշխատակարգը, ուսումնական պլանը:

Կրթական ծրագրով ավագ դպրոցի կրտսեր դասարանները (7-8-րդ, հետագայում 7-9-րդ) կոչված են ապահովելու 12-14 (12-15) տարեկան երեխաների ֆիզիկական և մտավոր զարգացումը, սովորողների նախասիրությունների համապատասխան ապահովելու առանձին առարկաների խորացված ուսուցումը, իրագործելու նախամասնագիտական ուսուցում: Ավագ դպրոցի կրտսեր դասարաններում ուսուցումը հիմնվում է 6-ամյա կրտսեր դպրոցում նրանց ստացած կրթության վրա, համարվում է դրա տրամաբանական շարունակությունը, բավարարում է սովորողների կրթական պատվերը: Սովորողները կարող են սովորել ինչպես վարժարանային, արհեստագործական, այնպես և ընդհանուր միջնակարգ կրթության դասարաններում: Սովորողների համար կրթահամալիրի խորհրդի սահմանած կարգով կարող է կիրառվել ուսուցման հեռակա, դրսեկության ձևերը: Ավագ դպրոցի կրտսեր դասարանները կարող են գործել վարժարանի, արհեստագործականի, մանկավարժական ուսումնարանի կազմում, առանձին՝ որպես «Նոր դպրոցի» կրթական ծրագրի դասարաններ: Ավագ դպրոցի կրտսեր (հիմնական դպրոցի ավագ) դասարաններում երեխաների և դպրոցի հարաբերությունները կարգավորվում են պայմանագրի հիման վրա: Դասարանը հավաքում, պայմանագիրը մշակում և սահմանված կարգով հաստատման է ներկայացնում դասարանի ղեկավարը: Ավագ դպրոցի կրտսեր դասարաններում շաբաթական 6-7 ժամ, իսկ ավագ դասարաններում մինչև 10 ժամ ժամաքանակով յուրաքանչյուր երեխա իր հետաքրքրությունները խորացնում է իր ընտրած մասնագիտացված դասընթացներում:

Մանկապարտեզի ու կրտսեր դպրոցականի կրթական ծրագրերը մշակելիս ուսուցիչները (դաստիարակները) որպես ելակետ ունեն Պիաժեի պնդումները՝ երեխայի զարգացումն է պայմանավորում ուսուցումը, և որ ինքնակարգավորումը մանկական հավաքանիի զարգացման հիմնական գործոնն է: Մեր պարտեզում երեխան շարունակում է գործուն շարժվել, մեր պարտեզում մանուկը ոչ թե դպրոցին է նախապատրաստվում, այլ ապրում է իր լիրարժեք ինքնուրույն կյանքով: Այս կերպ կյանքի առօրյա գործնական խնդիրները հեշտությամբ գլուխ բերող մարդ կդաստիարակվի:

Կրթական ծրագրի ավագ դպրոցի մշակումները նախատեսվում է կատարել 2004-2008 ուստարիներում: 2004-2006 թ.թ. մշակվելու և փորձարկվելու են կրտսեր դպրոցի (դպրոց-մանկապարտեզի) կրթակարգը, առարկայական ծրագրերը, դասագրքերը, մեթոդական ուղեցույցները, ուսուցիչների, մյուս աշխատողների վերապատրաստման ուղեցույցները:

**Մանկավարժական մասնագիտական կրթությունը, 6-ամյա տարրական կրթությունը և նախնական կրթությունը (նախադպրոցական դաստիարակությունը) կրթական ծրագրով փոխպայմանավորված են:** Կրթական ծրագրի իրագործումը ենթադրում է 2004-2006թ.թ. մանկավարժական ուսումնարանի (տնօրեն՝ Անահիտ Արնաուդյան) վերակառուցում, կրթահամալիրում 10 տարուց ավելի հաջողությամբ գործող «Կլինիկական» մանկավարժական կրթության բարեփոխում, նրա համապատասխանեցում «Նոր դպրոց» կրթական ծրագրի

պահանջներին, կրթական նոր ծրագրի՝ ուսուցչի պատրաստման քառամյա կրթական ծրագրի մշակում և իրագործում: Կրթական ծրագրով կարող են աշխատել բակալավրի աստիճան ունեցող (համապատասխան վերապատրաստում անցած) մասնագետները:

**Կրթական ծրագրում ընդգրկված մանկավարժական ուսումնարանի շրջանավարտ ուսուցիչները հատուկ կազմակերպված որակավորման արդյունքում ձեռք կբերեն բակալավրի աստիճան (տեղեկանքը կցվում է):**

Կրթական ծրագրի մոդել դպրոցում, գեղարվեստի խորացված ուսուցմամբ հանրակրթական դպրոցում, հիմնական դպրոցում և դպրոց-մանկապարտեզում, որպես կրթական ծրագրի նախապատրաստում՝ դիպլոմային աշխատանքներ են կատարում կրթահամալիրի մանկավարժական ուսումնարանի) ավարտական 3-րդ կուրսի ուսանողները:

Կրթական ծրագրի դասընթացների և դասավանդման մեթոդների վերանայման նպատակով կխթանվի ծրագրում ընդգրկված դպրոցների և ուսուցիչների ինքնավերահսկումն ու ինքնագնահատումը:

Կրթական ծրագրի մշակման ու իրագործման ընթացքում դպրոցներն ըստ դպրոցի ուսուցիչների մասնագիտական մակարդակի, նախասիրությունների և ձեռքբերումների հնարավորություն կունենան ստանալու «առանձնահատուկ» դպրոցի կարգավիճակ:

Դպրոցի նոր կազմակերպումը պահանջում է որակյալ ուսուցիչների բարձր ձգտումներ ու օջանքեր, որոնք կրթական ծրագրով կգնահատվեն ու կպարգևատրվեն:

Կրթական ծրագրի շրջանակում վերջնական տեսքի կբերվի հանրակրթական դպրոցի արդյունավետ կառավարման նոր եղանակը: Դպրոցների տնօրենները, ուսումնական քարտուղարները, տնտեսուհիները, դպրոցական շենքերի պարետները կվերապատրաստվեն ինչպես միասին, այնպես և առանձին խմբերով:

Փոփոխվող հասարակության պայմաններում կրթական ծրագիրը շարունակ հասարակական նոր պահանջներին համապատասխան պահելու համար կրթական ծրագրի ուսուցիչը ոչ միայն չի խուսափի սովորողների և նրանց ծնողների հետ երկխոսությունից, այլև կխրախուսվեն առկա դպրոցական (դասարանական) խնդիրների համատեղ լուծումը, նախաձեռնությունը, անգամ ռիսկի դիմելը՝ կրթության մասնակիցների՝ մտքերի ակտիվ փոխանակման, ինքնուրույն մտածողության որակապես այլ աստիճանի հասնելու համար: Կրթական ծրագրի իրագործման ընթացքում և արդյունքում ծրագրին մասնակցող դպրոցները, դասարանները՝ որպես բնական կրթական համայնքներ, աշակերտներին, նրանց ծնողներին և ուսուցիչներին ավելի մեծ ազատություն կտան, ընտրության ավելի մեծ դաշտ, իրական պրակտիկ հնարավորություններ, ավելի հանդուրժող միջավայր կընձեռեն, միջավայր, որտեղ միշտ մեկից ավելի ճիշտ պատասխաններ կան: Կրթական ծրագրի իրականացնողները հանդգնած են, որ ազատությունն ու պատասխանատվությունն անբաժան են. կրթության մասնակիցների ազատության լիարժեք իրագործումն է հենց կրթական ծրագրի ստեղծման և իրականացման մեթոդը: Որպես բնական կրթական համայնք գործող դպրոցի և դասարանի պայմաններում կրթական ծրագրի բոլոր մասնակիցների սխալները թույլատրելի են, իսկ բացասական հետևանքները՝ ուղղելի: Կրթական ծրագրին մասնակից դպրոցի տնօրենը, ուսուցիչը կրթական ծրագիրը որպես մանկավարժական խնդիր ինքնուրույն լուծելու, իր

իրագործածի արդյունքների համար դասարանի, համայնքի առաջ անձնապես պատասխանատու լինելու համար կունենան անհրաժեշտ ազատություն, իսկ դպրոցը, դասարանը կգործեն որպես բնական համայնք՝ օրգանապես կապված հասարակությամբ: Ազատ ու պատասխանատու ուսուցիչը սովորողներին այնպիսի ուսումնական փորձառությունների հնարավորություններ կտա, որոնք թույլ կտան սովորողին ոչ միայն իմանալ, այլև զգալ, որ **ազատության իրագործման դրսևորումը պատասխանատվություն ստանձնելու ազատությունն է:**

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության սահմանած կարգով նախատեսվում է կրթական ծրագիրը ներդնել (փորձարկել) «Նոր դպրոց» կրթական ծրագրի ցանցում ընդգրկված այլ դպրոցներում: Դրանք կարող են լինել դպրոցներ, որոնք «Կրթության որակի և համապատասխանության» վարկային ծրագրով ընտրված են որպես ուսուցիչների վերապատրաստման դպրոց-կենտրոններ, ինչպես նաև այն դպրոցները (մանկապարտեզները), որոնք կբավարարեն ծրագրի մասնակից դպրոցին ներկայացվող պահանջներին:

### **3. Կրթական ծրագրի առաքելության մասին**

Կրթական ծրագիրը ներառում է բոլոր երեխաներին: Մենք, ինչպես նախկինում, իրագործում ենք «Կրթություն բոլորի համար»՝ միասին սովորում, միասին ապրում և՛ «առանձնահատուկը», և՛ «արտակարգը», և՛ «սովորականը»: **Կրթական ծրագրով՝ «կրթել նշանակում է ստեղծագործելու հնարավորություններ ընձեռել»:** Մեր նոր դպրոցում ստեղծագործելը կլինի առաջին տեղում, մեր նոր դպրոցը կնպաստի ուսուցիչների և երեխաների մեջ ստեղծագործ անհատին բնորոշ գծերի զարգացմանը: Ստեղծագործության մասին խոսելիս մենք նկատի ունենք ոչ թե առանձին առարկաներ, այլ դպրոցն ամբողջությամբ, նրա ողջ գործունեությունը: Անգամ երբ խոսքը դպրոցական շենքին, բակին ու դասասենյակին է վերաբերում, դրանց հիմնական առանձնահատկությունը փոխակերպվելու հատկությունը պիտի լինի, դրանից օգտվող ուսուցիչն ու սովորողը հնարավորություն կունենան դրանք ակտիվորեն, ստեղծագործաբար կերպափոխելու: Քանզի, ինչպես ճշգրիտ ձևակերպել է Ջ. Ռոդարին, «ստեղծագործելը յուրօրինակ մտածելակերպի, այսինքն կուտակված փորձի սովորական **չրջանակները մշտապես ջարդելու կարողության հոմանիշն է**»: Ստեղծագործական մտածողությունն ակտիվ, որոնողական մտածողություն է, որը չլուծված խնդիրներ է տեսնում այնտեղ, որտեղ ուրիշները, կարծելով, թե ամեն ինչ իր պատրաստի պատասխանն ունի, դրանք չեն նկատում: Փոփոխվող իրադրության մեջ, այնտեղ, որտեղ ուրիշների աչքերին վտանգներ են երևում, ստեղծագործական մտածողությունն իրեն զգում է ինչպես ձուկը ջրում. նա անկախ ու ինքնուրույն որոշումներ է ընդունում. նա իրերի ու հասկացությունների հետ նորովի է աշխատում: Այս բոլոր հատկություններն ստեղծագործելիս են դրսևավում: Եվ այդ «գործընթացը (լավ լսեք, լսեցե՛ք) ուրախ, խաղային է միշտ, անգամ եթե խոսքը «չոր մաթեմատիկային է» վերաբերում»: Կրտսեր դպրոցի բոլոր դասարաններում յուրաքանչյուր երեխա հանրակրթական դպրոցի ուսումնական պլանով շաբաթական մինչև 4 ժամաքանակով իր նախասիրությունները զարգացնելու հնարավորություն կունենա:

Բոլորը հիմա պահանջում են, որ դպրոցը ոչ միայն գիտելիքներ մատակարարի, այլև երեխաների կարողությունները, ինքնուրույնությունը, ինքնօրինակությունը, ստեղծագործական ընդունակությունները զարգացնի: Սակայն ոչ ոք այդ հիանալի բաները չի պահանջում ուսուցչից: Ինչպես ժամանակին Ջ. Փոյան է նկատել, եթե ուսուցիչն ինքը չի զբաղվում ստեղծագործական աշխատանքով, ապա չի կարող ոգեշնչել, ղեկավարել, աջակցել կամ նույնիսկ պարզապես արձանագրել իր աշակերտների ստեղծագործական ակտիվությունը: Ուսուցիչը, ում ամբողջ մասնագիտական գիտելիքները մանկավարժական ԲՈՒՅ-ում ձեռքբերված են զուտ հայեցողական ճանապարհով, ով հայեցողական եղանակով լրացրել է դրանք աշխատանքի ընթացքում, ոչ միայն չի օժանդակում իր աշակերտների ինքնուրույն որոնողական գործունեությանը, այլ քաջալերելու փոխարեն խոչընդոտում է ինքնուրույնություն և անկախ մտածողություն դրսևորած աշակերտներին :

**«Նոր դպրոց» կրթական ծրագրի իրագործողները համոզված են, որ ինչպիսին ուսուցիչն է, այնպիսին և դպրոցը կլինի: Կրթական ծրագրի իրագործումը կընթանա ուսուցչի պատրաստման հետ համաքայլ:**

Մեր նոր դպրոցն իր կազմակերպմամբ կապահովի, որ անընդհատ սովորեն, սովորել սովորեն ու սովորեցնել սովորեն ոչ միայն երեխաները, այլև երեխայի հետ աշխատող յուրաքանչյուր ուսուցիչ: Դպրոցը իր նոր կազմակերպմամբ պայմաններ կապահովի ոչ միայն սովորողի, այլև ուսուցիչների տաղանդի զարգացման համար: Մեր նոր կազմակերպումը կլինի դպրոցական պրակտիկայի ու տեսության միություն՝ նրանց փոխկապակցությամբ ու փոխադարձ պայմանավորվածությամբ: Մեր բոլոր նորամուծությունները կառուցված կլինեն բացառապես փորձի վրա, կրթական արդյունքները ստացված կլինեն սովորական երեխաների հետ նոր պայմաններում աշխատանքից:

Կրթական ծրագիրը կհաստատի փորձարարական մանկավարժությանը բնորոշ մեթոդ: Յետազոտողի ոգով համակված և երեխա-մարդու «դիտարկողը դարձած ուսուցիչը երեխայի անհատականության ազատ ու բնական դրսևորումների համար անհրաժեշտ տարածություն կբացի»:

Մեր կրթական ծրագրով աշխատող ուսուցչի համար կրթությունը կսկսվի երեխայի կարողությունների, հետաքրքրությունների և սովորությունների հոգեբանական ըմբռնումից:

Կրթական ծրագրի կազմակերպումը կարտացուլի սովորողի ներկա կյանքը, այն իրական կյանքը, որով երեխան ապրում է տանն ու դրսում:

Կրթական ծրագրում ընդգրկված են աշխատողներ, ովքեր համոզված են, որ «ամենալավ ու ամենախորը բարոյական դաստիարակությունն իրապես այն է, որ ստանում ես ուրիշների հետ պատշաճ հարաբերությունների մեջ մտնելով, համատեղ աշխատելով ու մտածելով»: Կրթական ծրագրի մասնակիցները գիտակցում են, որ չափազանց բարձր է ընտանեկան միջավայրի ազդեցությունն ուսման նկատմամբ երեխայի վերաբերմունքի ձևավորման հարցում: **Սովորողների ծնողները կունենան Եվրոպայի ծնողների Ասոցիացիայի (EPA) ամրագրած իրավունքներն ու պարտականությունները (հավելված 3):** Կրթական ծրագրում ընդգրկված բոլոր սովորողները հատուկ ծրագրով կմասնակցեն հասարակական (համայնքային, դպրոցական, դասարանական) հանրօգուտ աշխատանքներին: Կարվի առավելագույնը, որ

ծնողներն իրենց փորձով ու կապերով արդյունավետ դարձնեն երեխաների հանրօգուտ աշխատանքը:

Սովորողի, նրա ուսուցչի կարգապահությունը հիմնված կլինի նրանց գործելու ազատության վրա և ակտիվ կլինի. երեխան կսովորի սահմանափակել իր ազատությունը հավաքանիի (դասարանի, խմբի) շահերից ելնելով: **Ակտիվ կարգապահությունը, որին կվարժվի երեխան, դպրոցական միջավայրով չի սահմանափակվի, այլև կտարածվի նրա սոցիալական միջավայրի վրա:** Քանի որ անհնար է ազատ լինել՝ ինքնուրույն չլինելով, ուսուցիչը (դաստիարակը) մանկան անհատականության ազատության դրսևորումներն այնպես կուղղորդի, որ երեխան շարունակ ավելի ինքնուրույն գործի: Սովորելով Մոնթեսորիին՝ մանկապարտեզի դաստիարակներն ազատությունը կհասկանան կենսաբանական տեսանկյունից՝ որպես երեխայի անձի զարգացման բարենպաստ պայման:

Կրթական ծրագրի իրագործողներն առավելագույն ջանքեր կգործադրեն սովորողի ուժերի խթանման համար: Ահա ինչու ուսուցումը կլինի առավելագույնս անհատականացված: Սովորողի հետաքրքրությունները կուսումնասիրվեն որպես երեխայի զարգացման ցուցանիշներ, քանի որ մենք համոզված ենք, որ «երեխայի հետաքրքրությունները կանխորոշում են նաև այն փուլը, որտեղ պատրաստվում է ոտք դնել երեխան»: Կրթական ծրագրով իրագործվող «անհատականացված կրթությունն» առավել մեծ ուշադրություն կդարձնի ստեղծագործականության զարգացմանը, անհատական հետաքրքրությունների բավարարմանը, տեխնիկական վերազինմանը, լաբորատոր ինքնուրույն աշխատանքի կազմակերպմանը: Յուրաքանչյուր սովորողի հետաքրքրությունների ճանաչման ու զարգացման համար կրթական ծրագրով կնորացվի կրթահամալիրի նախասիրական դպրոցների գործունեությունը (նախասիրական դպրոցների մասին տեղեկանքը կցվում է): Նախասիրական դպրոցների տեխնիկական վերազինումն անհնար է իրականացնել միայն ծնողական մուծումների հաշվին. ենթադրվում է, որ 2005թ.-ից նախասիրական դպրոցներին բյուջետային հատկացումներ կլինեն:

**Կհարստացվի և կընդարձակվի կրթության բովանդակությունը, որպեսզի այն հնարավորինս համապատասխանի սովորողների անհատական կարիքներին:** Կրթության հարստացված բովանդակությունը կծառայի սովորողների անհատականության զարգացմանը՝ ընդլայնելով միջին և ավագ դասարաններում մասնագիտական դասընթացներն ընտրելու աշակերտի հնարավորությունները: Ուսումնառության հնարավորությունները մեծացնելու շնորհիվ աշակերտների համար սովորելը կդառնա սովորություն: **Դասի, պարապմունքի ընթացքը ուսուցիչը կդարձնի աշակերտի համար հաճելի՝ խթանելով բոլորի սովորելու ձգտումը:** Գեղագիտական կրթության մեջ թաքնված հսկայական ներուժը կուղղվի սովորողների կամքի և զգացումների դաստիարակմանը: **Մենք համոզված ենք, որ իրական ուսուցումը անհատական որոնումների արդյունք է:**

Ուսուցիչներն ամեն ինչ կանեն, որ ուսումնառության ընթացքում յուրաքանչյուր աշակերտ «ձեռք բերի աշխատանքի մեջ գլխովին թաղվելու զգացում»: Յուրաքանչյուր երեխա ինքնուրույն կանի բնագիտական փորձերը, որպեսզի հասկանա բնագիտական երևույթները,



որպեսզի նաև բնագիտական առարկաներ ուսումնասիրելիս ձեռք բերի ստեղծագործական մտածողություն:

Ուսումնասիրման գործընթացի արդյունավետության համար կրթական ծրագրերով ցանկացած առարկայի դասավանդումը պիտի ապահովի, որ հետազոտման (ընկալման) փուլը նախորդի հասկացությունների բառային ձևակերպման (սահմանման) փուլին, իսկ ուսումնասիրված նյութը վերջում լրացնի սովորողի գիտելիքի ընդհանուր պաշարը՝ նպաստելով նրա մտավոր մակարդակի բարձրացմանն ու գիտելիքների կիրառությանը:

#### **4. Կրթական ծրագրի մանկավարժական կազմակերպման մասին**

**Կրթական ծրագրի ուսուցիչները (մանկավարժական աշխատողները) կվճարվեն շաբաթը 35-37 ժամ աշխատանքի դիմաց:** Այդ աշխատաժամանակը կազմված կլինի շաբաթական 20-22 ժամ ուսումնական պարապմունքներից, 5 ժամ՝ դաստիարակչական (կազմակերպչական) աշխատանքից, 5 ժամ մասնագիտական կատարելագործումից, 5 ժամ հետազոտական գործունեությունից: Այսպիսով, ուսուցիչը ամեն օր ժ. 9.00-ից մինչև 16.00 կլինի աշխատավայրում՝ դպրոցում: Ուսումնական ճամփորդությունների, նախասիրական պարապմունքների և համադպրոցական մրցույթների կազմակերպման նպատակով, ըստ հարկի, ուսուցիչը կաշխատի նաև շաբաթ օրերը (ուսուցչի աշխատակարգը բերված է հավելված 4-ով):

Կրթահամալիրի մանկավարժական ուսումնարանն ավարտած միջին մասնագիտական որակավորում ունեցող ուսուցիչների համար մասնագիտական զարգացումը և հետազոտական գործունեությունը կկազմակերպվեն բակալավրի որակավորման ծրագրի շրջանակում: Ուսուցիչները մասնագիտական կատարելագործման ու հետազոտական գործունեության համար ստացած աշխատավարձը կմուծեն որպես բակալավրի որակավորման համար ուսումնական վճար: Հետազոտական գործունեության ու մասնագիտական զարգացման կազմակերպումը բարձրագույն կրթություն ունեցող մասնագետներին թույլ կտա ստանալու մագիստրոսի կոչում կամ գիտությունների թեկնածուի աստիճան:

Կրթահամալիրի մանկավարժական ուսումնարանը, Երևանի Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի համապատասխան ամբիոնները և կրթական ծրագրում ընդգրկված դպրոցները կկազմեն ու կգործեն որպես մանկավարժության մասնագիտական զարգացման կենտրոն:

Կրթահամալիրի մանկավարժական ուսումնարանի ուսանողները 1-ին կուրսից սկսած շաբաթական մինչև 5 ժամ ծանրաբեռնվածությամբ կաշխատեն որպես կրթական ծրագրի մասնագետների ընթերականներ: Նախատեսվում է, որ մանկավարժական ուսումնարանի 2-րդ կուրսը հաջողությամբ ավարտած ուսանողները կրթական ծրագրի մանկավարժ տնօրենի երաշխավորությամբ ուսումը համապատասխան մասնագիտության գծով կշարունակեն Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի 3-րդ կուրսում: Ուսանողները մասնագիտական դասընթացները կուսումնասիրեն համալսարանում գործող ծրագրերով, իսկ մանկավարժական վարպետության ձեռքբերմանը, մասնագիտական զարգացմանն ուղղված աշխատանքները կանեն և հետազոտողի որակները ձեռք կբերեն կրթահամալիրի կրտսեր

դպրոցներում՝ որպես ընթերականներ, անհատական ծրագրով կազմակերպված մանկավարժական փորձառության ընթացքում:

**Կրթական ծրագրի բոլոր սովորողները կրթական ծրագիրը կյուրացնեն հետազոտական, ինքնուրույն որոնողական և ստեղծագործական գործունեության արդյունքում:** Ընդհանուր պարտադիր դասընթացների (15-20 հոգիանոց խմբերով պարապմունքներ) ծավալը 7-րդ դասարանից սկսած կնվազի: Հետազոտական, ինքնուրույն որոնողական աշխատանքները կկազմակերպվեն մինչև 5 հոգիանոց խմբերով: Դասարանները, ուսումնական լսարանները կվերակազմակերպվեն ու կգործեն որպես արվեստանոց-արհեստանոցներ (լաբորատորիաներ)՝ հարմարեցված ինքնուրույն անհատական ու խմբային հետազոտական-որոնողական-ստեղծագործական աշխատանքի համար:

Կրթական ծրագրում ընդգրկված դպրոցները (դասարանները) կունենան անհատական ուսումնական պլաններ: Կրթական ծրագիրը (դպրոցը, դասարանը) երաշխավորում է յուրաքանչյուր երեխայի անհատական հետաքրքրությունների (նախասիրությունների) զարգացման համար պայմաններ: Ուսումնական պարապմունքի (դասերի) ընթացքում յուրաքանչյուր երեխա (խումբ) հնարավորություն կունենա օգտվելու դպրոցի (կրթական ծրագրի) բոլոր արվեստանոց-արհեստանոցներից (լաբորատորիաներից): Յուրաքանչյուր դպրոց (դասարան) կունենա իր ուսումնափորձնական հողամասը (բաց և ծածկած):

Կրթական ծրագրի սովորողի հետ դպրոցի (դասարանի) ղեկավարը կկնքի պայմանագիր: Պայմանագրին կկցվի տվյալ դասարանի ուսումնական պլանը (պարզաբանումներով), պայմանագրով կորոշվեն երեխայի ուսման ու ուսման վճարի առանձնահատկությունները: Երեխաները ծնողի ցանկությամբ կընդգրկվեն երկարօրյա ուսուցման խմբերում:

**Կրթական ծրագրով սովորողի և նրա ուսուցչի ուսումնական գործունեությունը բաց կլինի յուրաքանչյուր ծնողի, հասարակության ամեն մի անդամի համար. նրանք կկարողանան անարգել ներկա գտնվել ուսումնական պարապմունքներին և ուսուցիչների մասնագիտական քննարկումներին:** Դպրոցը (դասարանի ղեկավարը) յուրաքանչյուր սովորողի (դասարանի, խմբի) հանրօգուտ (հասարակական) աշխատանքների հաշվառում կանցկացնի. ուստարվա ընթացքում սովորողն իր ընտրությամբ կմասնակցի դպրոցի (դասարանի) առաջարկած հանրօգուտ աշխատանքներին, մինչև մեկ շաբաթ ժամանակով հասարակական գործունեության փորձառություն կանցնի:

Կրթական ծրագրի դպրոցներում, դասարաններում կընդունվեն սովորելու սովորական երեխաներ, ում ծնողները կընտրեն կրթական ծրագիրը՝ ունենալով դպրոցը, դասարանը ընտրելու իրական ազատություն: Սովորողի գիտելիքները կստուգվեն ինքնաստուգման համակարգով. գիտելիքների մակարդակը կրտսեր դպրոցի դասարանում խոչընդոտ չի լինի կրթությունը շարունակելու համար: Դասարանական միջավայրը, ուսումնական գույքը, ձեռնարկներն ու միջոցները հարմար կլինեն տվյալ կոնկրետ երեխայի համար, այնպես որ երեխաները կկարողանան իրենց բնական հակումները դրսևորել: Ուսուցիչը կկարողանա տեխնիկական միջոցների օգտագործմամբ այնպիսի ինքնահսկում ապահովել, որը կօգնի նրան դասարանում շարունակ նահանջելու հետին պլան՝ առաջին պլանում պահելով երեխային ու նրա գործունեությունը:

Ուսուցիչը կսովորի գրանցել իր խոսքերը դասարանում՝ հետևողականորեն կրճատելով խոսքը, ազատելով այն ավելորդություններից և անորոշություններից, ավելի շատ ժամանակ տրամադրելով սովորողի ակտիվ դրսևորմանը:

## **5. Կրթական ծրագրի տեխնիկական կազմակերպման մասին**

Կրթական ծրագրի իրագործողներին (մշակողներին) պայմանականորեն երկու խմբի կարելի է բաժանել: Մի խմբում կրթահամալիրում ստեղծված հեղինակային մանկավարժության հեղինակներ են՝ մանկավարժական հետազոտական-մեթոդական շոշափելի աշխատանք կատարած ուսուցիչները՝ կրթահամալիրի մանկավարժական ուսումնարանի դասախոսները: Նրանք երկար տարիներ ղեկավարել են մանկավարժական ուսումնարանի 3-րդ կուրսեցիների դիպլոմային աշխատանքները (ցանկը կցվում է), բազում հրապարակումների (հոդվածների, դասագրքերի, ծրագրերի, մեթոդական ուղեցույցների) հեղինակներ են (ծրագրի պատասխանատուների «մասնագիտական կենսագրությունը» կցվում է): Մյուս խմբում նրանց 22-28 տարեկան սաներն են, ովքեր ավարտել են կրթահամալիրի վարժարանը, ստացել բարձրագույն մանկավարժական կրթություն և աշխատում են կրթահամալիրում՝ որպես ուսուցիչ: Այս խմբին պետք է դասել նաև կրթահամալիրի մանկավարժական ուսումնարանն ավարտած ու կրթահամալիրում աշխատող ուսուցիչներին:

**Կրթական ծրագիրն իրականացնողների մեծ մասը գործնականում տիրապետում է ռուսերենին և անգլերենին, համակարգչով աշխատելու սովորություն ունի և օգտագործում է ինտերնետն իր մասնագիտական գործունեության համար: Նրանցից շատերը վերջին 5-6 տարում մասնակցել են մի շարք կրթական ծրագրերի մշակմանն ու իրագործմանը, վերապատրաստում են անցել և յուրացրել դասավանդման ժամանակակից մեթոդներ:**

Կրթական ծրագրի շրջանակում 2001թ. սեպտեմբերի 1-ից կրթահամալիրի Մայր դպրոցի շենքում սկսել է գործել կրթական ծրագրի մոդել-դպրոցը՝ մեր Նոր դպրոցը (տնօրեն՝ Նաիրա Նիկողոսյան): Մոդել դպրոցի 1-6-րդ դասարաններում 2003-2004 ուստարում սովորել են 80 երեխաներ:

Կրթահամալիրի գեղարվեստի խորացված ուսուցմամբ դպրոցում (տնօրեն՝ Գրիգոր Խաչատրյան) 2003-2004 ուստարում գործել են գեղագիտական դաստիարակության 1-10-րդ դասարաններ, 6 տարեկանների նախապատրաստական խումբը:

2003-2004 ուստարում կրթահամալիրի դպրոց-մանկապարտեզում (տնօրեն՝ Մարիետ Սիմոնյան) գործել են մինչև 5 տարեկանների մանկապարտեզային 3 խմբեր, 5 տարեկանների նախապատրաստական խումբը, 6 տարեկանների փորձնական 1-ին դասարանը, 1-6-րդ մեկական դասարաններ:

Կրթահամալիրի հիմնական դպրոցում (տնօրեն՝ Սուսան Մարկոսյան) 2003-2004 ուստարում գործել են 5 տարեկանների նախապատրաստական խումբը, 6 տարեկանների փորձնական 1-ին դասարանը, 1-6-րդ դասարաններ:

Կրթահամալիրի կազմում այսօր միջնակարգ կրթություն տվող երկու ինքնուրույն ավագ դպրոց է գործում. քառամյա վարժարան (7-10-րդ դասարաններ) և քառամյա արհեստագործական դպրոց (7-10-րդ դասարաններ):

Կրթահամալիրի մանկավարժական ուսումնարանի 1-ին, 2-րդ, 3-րդ կուրսերում սովորում են 126 ուսանողներ:

Կրթական ծրագրի մանկավարժ-տնօրենը Աշոտ Բլեյանն է, կրթական ծրագրի մշակումները կատարում է կրթահամալիրի հետազոտական-մեթոդական կենտրոնը (ղեկավար՝ Գևորգ Չակոբյան): Կրթական ծրագիրն իրագործողների համար գործում է «Նոր դպրոց» մանկավարժական սեմինարը (սեմինարի ղեկավար՝ Նաիրա Նիկողոսյան): Կրթական ծրագրի բաղկացուցիչների մշակման աշխատանքները համակարգում են ծրագրի պատասխանատուները՝ կրթահամալիրի կամավոր-ուսուցիչներից կազմված խմբերի ղեկավարները:

Կրթական ծրագրի մշակմանը զուգահեռ կրթահամալիրի «Մեխակ» կրթամշակութային կենտրոնում կստեղծվի կրթական ծառայությունների և ուսուցման միջոցների «Նոր դպրոց» կենտրոնը: Կենտրոնի միջոցով կկատարվի կրթական ծրագրի իրագործման նյութական-տեխնիկական ապահովումը, ինչպես նաև «Նոր դպրոց» կրթական ցանցի սպասարկումը ուսումնական գրականությամբ և այլ միջոցներով, կրթական ծառայություններով: Կրթական ծրագիրը կունենա ինտերնետ ապահովում:

Կրթական ծրագրի մանկավարժական խորհրդատու ծառայությունը (ղեկավար՝ Լուսինե Ալեքսանյան) կաշխատի կրթական ծրագրի համայնքի (կրթական ծրագրի բոլոր պոտենցիալ շահառուների) հետ: Կրթական ծրագրով հետաքրքրվող յուրաքանչյուրի հարցերն ու առաջարկները պատշաճ ուշադրության կարժանանան հեռակա և առկա խմբային, անհատական քննարկումների, օնլայն և կենդանի սեմինարների միջոցով:

Կրթական ծրագրի շրջանակում ուսումնական տարածքների, դասարանական ինտերյերների վերանորոգման, աշխատանքների նախագծման, ուսումնական գույքի և ուսուցման միջոցների ձևավորումները կկատարի ծրագրի դիզայների խումբը (ղեկավար՝ Գրիգոր Խաչատրյան):

Կրթական ծրագրի սովորողների ընտրությունը, ուսումնական գործընթացին անհրաժեշտ ինֆորմացիոն ապահովումը կկատարեն դպրոցների ուսումնական քարտուղարները (ղեկավար՝ Լուսինե Մամիկոնյան):

Կրթական ծրագրի մշակմանը զուգահեռ կձևավորվի «Նոր դպրոց» տեղեկատվական-գովազդային ծառայությունը (ղեկավար՝ Նաիրա Նիկողոսյան):

Կրթական ծրագրի սոցիոլոգը (Լուսինե Ալեքսանյան) և հոգեբանը (Ռիմա Երեմյան) կնպաստեն աշակերտ-ուսուցիչ, ուսուցիչ-ծնող, ծնող-երեխա համագործակցությունը, կրթական ծրագրի զարգացմանը և համապատասխանեցմանը պատվիրատուի (տվյալ դեպքում՝ ծնողի) պահանջներին:

«Նոր դպրոց» կրթական ծրագրի գրադարանային սպասարկումը կիրականացնի կրթահամալիրի գրադարանը (տնօրեն՝ Մարի Գաբանյան), ով հատուկ կազմակերպված

ընթերցարաններ կստեղծի ինչպես գրադարանում, այնպես և ծրագրի իրագործման դպրոցներում:

Ծրագրի մասնակից յուրաքանչյուր ուսուցիչ կունենա իր աշխատասեղանը ընթերցարանում, անարգել կօգտվի ինտերնետային կապից ու բազմացնող սարքից, տեսադարանից ու ձայնադարանից: Մարիա Մոնթեսորիի «Մանկան տուն», Սելեստան Ֆրենեի «Նոր ֆրանսիական դպրոց», Ջանի Ռոդարու «Երևակայության քերականություն», Ջորջ Փոյայի «Մաթեմատիկական հայտնություն», Ջոն Դյուիի «Իմ մանկավարժական դավանանքը» աշխատությունները գործնական ուղեցույց են կրթական ծրագրի մշակողների և իրագործողների համար: Կրթական ծրագրի յուրաքանչյուր իրագործող իր ընտրությամբ ընդգրկված կլինի ծրագրի բաղկացուցիչը մշակող գոնե մեկ խմբում: Կրթական ծրագրի մշակման ու մանկավարժական մշտական սեմինարի ընթացքը կկազմակերպվեն այնպես, որ ավելորդ դարձնեն մասնագիտական զարգացման, ուսուցիչների վերապատրաստման գործի առանձին կազմակերպումը: Կրթական ծրագրի մասնակիցները կյուրացնեն ողջ ծրագիրը՝ իր բոլոր (նաև առարկայական) բաղկացուցիչներով:

Կրթական ծրագրի պատասխանատուները ծրագրի մշակման և ներդրման ընթացքում գործընկերային հարաբերություններ կհաստատեն կրթական բարեփոխումների կենտրոնի համապատասխան մասնագետների (բաժինների) հետ: Կրթական ծրագրի մշտական գործող սեմինարները, որտեղ քննարկվելու են (լսվելու են) բոլոր մշակումները, բաց կլինեն ծրագրով հետաքրքրվող յուրաքանչյուրի համար: Կրթահամալիրի ինտերնետ էջում կտեղադրվեն կրթական ծրագրի բոլոր մշակումները:

**Կրթական ծրագրի պատասխանատուները կծնավորեն խորհուրդ, որը որպես մշտական գործող մարմին, կրթական ծրագրի մանկավարժ-տնօրենի ներկայացմամբ կքննարկի ու կհաստատի կրթական ծրագրի բոլոր մշակումները: Խորհրդի կազմում կընդգրկվեն ՀՀ ԿԳՆ Ազգային ինստիտուտի մասնագետները:**

## **6. Կրթական ծրագրի ֆինանսական կազմակերպման մասին**

Կրթական ծրագրի մշակման համար կօգտագործվեն բյուջեով կրթահամալիրի մեթոդական աշխատանքների համար հատկացումները, կրթահամալիրի ոչ բյուջետային միջոցները, կրթահամալիրի դասագրքերի շրջանառու միջոցները, «Կրթության որակի ու համապատասխանության» հանրապետական ծրագրի, միջազգային դրամաշնորհային ծրագրերի ու բարեգործական ծրագրերի հնարավորությունները: Կրթահամալիրի կազմում գործող և «Նոր դպրոց» կրթական ծրագրում ընդգրկված հանրակրթական դպրոցները՝ հիմնական դպրոցը, դպրոց-մանկապարտեզը, գեղարվեստի խորացված ուսուցմամբ հանրակրթական դպրոցը, արհեստագործական դպրոցը 2005թ. հունվարի 1-ից պետական բյուջեից հատկացումներ կստանան ֆինանսավորման նոր կարգի համաձայն ( $B=AN+C$  բանաձևով): Դպրոցների աշակերտների թվակազմի մեջ կհաշվեն նաև մանկապարտեզի և նախադպրոցական խմբերի երեխաներին: Մանկավարժական ուսումնարանը նորից պետական պատվեր կստանա: Համապատասխան բյուջետային հատկացումներ կարվեն կրթահամալիրի նախասիրական դպրոցներին:

Կրթական ծրագրի դասարաններում (ընդհանուր դասընթացներում) սովորողների թիվը կլինի 15-ից 20: Կրթահամալիրի գործադիր տնօրենը (Ռախսա Գալստյան) կրթական ծրագրում ընդգրկված դպրոցի, դասարանի տարեկան նախահաշվով կապահովի պետական բյուջետային (պետական-նորմատիվային) միջոցների հատկացումը: Մասնագիտական դասընթացներին և նախասիրական պարապմունքներին կձևավորվեն ուսումնական պլանով սահմանված թվաքանակով խմբեր: Կրթական ծրագրում ընդգրկված դպրոցի, դասարանի գործունեության համար անհրաժեշտ մյուս հատկացումները կկատարեն կրթական ծրագրի մյուս շահառուները (ծնողները, սովորողները, կրթահամալիրը, դրամաշնորհները, բարեգործները)՝ համաձայն դպրոցի (դասարանի ղեկավարի) և ծնողի միջև կնքվող պայմանագրի:

Հավելվածի 5-ի ձևով ներկայացված են կրթական ծրագրի մոդել դպրոցի տարեկան ծախսերի նախահաշվի ուղեցույցը: Կրթական ծրագրում ընդգրկված ուսուցչին մանկավարժական հետազոտական, մասնագիտական զարգացման գործունեության համար վճարումները կկատարի կրթության և գիտության նախարարությունը՝ այդ աշխատանքների համար նախատեսված բյուջետային միջոցներից: Դաստիարակչական աշխատանքի վճարումները և ուսումնական պարապմունքների համար ուսուցչի վճարումները կկատարվեն բյուջետային հատկացումներից և ուսումնական լրավճարներից, ինչպես նաև կրթական ծրագրերի այլ շահառուների հատկացումներից:

Կրթական ծրագրի դպրոցի (դասարանի) ծախսերի տարեկան բյուջեն կազմում են դպրոցի (դասարանի) ղեկավարը և հաշվապահը, և կրթահամալիրի գործադիր տնօրենի ներկայացմամբ հաստատում է կրթահամալիրի խորհուրդը:

## **7. Կրթական ծրագրի հաստատումից հետո**

Կրթական ծրագիրը 2004թ. մայիսին հաստատել է կրթահամալիրի խորհուրդը: Կրթական ծրագիրը սահմանված կարգով ներկայացված է ՀՀ ԿԳ նախարարին, հանրակրթության վարչության պետին, ԿԳ նախարարության կրթության ազգային ինստիտուտին, կրթական ծրագրերի կենտրոն «ԾԻԳ»-ի տնօրենին, ԿԳ նախարարության լիցենզավորման վարչության պետին, Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի ռեկտորին:

Կրթահամալիրի և կրթական ծրագրերի կենտրոն «ԾԻԳ»-ի միջև կնքած պայմանագրի համաձայն կրթահամալիրը 2004թ. սեպտեմբերին կստանա նոր սերնդի անհատական 26 համակարգիչ:

Կրթահամալիրը ԿԳ նախարարության սահմանած կարգով ճանաչվել է դպրոց-կենտրոն և 2005-2008թ.թ. կրթական ծրագրերի կենտրոն «ԾԻԳ»-ի հետ կնքած պայմանագրի համաձայն «Կրթության որակի և համապատասխանության» ծրագրի շրջանակում կկազմակերպի Մալաթիա-Սեբաստիա համայնքի ուսուցիչների վերապատրաստումը:

Կրթահամալիրը միջին մասնագիտական մանկավարժական կրթության ծրագրեր իրականացնելու լիցենզիա է ստացել (ՀՀ ԿԳ նախարարի հրամանը, լիցենզիա 291):

ԿԳ նախարարի 28.08.2004թ. թիվ 566-Ա(Ք) հրամանով կրթահամալիրի դպրոց-մանկապարտեզի, գեղարվեստի խորացված ուսուցմամբ հանրակրթական դպրոցի և

հիմնական դպրոցի բազայի վրա իրականացնում է «Նախակրթարանների ուսումնադաստիարակչական ծրագրերի մշակում և փորձարկում» հանրապետական ծրագիրը: Կրթահամալիրի ուսուցիչների հեղինակած դասագրքերը, մեթոդական ուղեցույցներն ու այլ ուսումնական գրականությունը՝ որպես օժանդակ գրականություն, 2004-2005 ուստարում կգործածվեն հանրապետության հանրակրթական դպրոցներում:

ՀՀ ԿԳ նախարարության կրթության ազգային ինստիտուտը հավանություն տվեց կրթահամալիրի հանրակրթական դպրոցների՝ «Նոր դպրոց» կրթական ծրագրի հիման վրա մշակված 2004-2005 ուսումնական տարվա ուսպլաններին:

ՀՀ ԿԳ նախարարի 2004թ. սեպտեմբերի 1-ի հրամանով ներառական կրթությունն իրականացնող հիմնական դպրոցում փորձարկվում է հատուկ կրթության չափորոշիչի նախագիծը:

ՀՀ պետական բյուջեի 2005թ. նախագծում ՀՀ կրթության և գիտության նախարարությունը սահմանված կարգով առաջարկել է ֆինանսավորել «Նոր դպրոց» կրթական ծրագրով հիմնավորված ծրագրերը:

Կրթահամալիրի հանրակրթական դպրոցների «Նոր դպրոց», «Իմացումի հրճվանք», լեզուների, գեղարվեստի խորացված ուսուցմամբ ծրագրերով 1-ին դասարաններ ընդունվեցին մոտ 160 6-7 տարեկաններ՝ 40-ով ավելի, քան 2003-2004 ուստարում:

**«Նոր դպրոց» կրթական ծրագրի սովորողների ծնողների իրավունքներն ու պարտականությունները**

Եվրոպայի Ծնողների Ասոցիացիայի (EPA) Կանոնադրության մեջ թվարկված հիմնական իրավունքներն ու պարտականությունները հետևյալն են.

- Ծնողներն իրավունք ունեն համարվելու իրենց երեխաների առաջնային կրթողները:
- Ծնողները պարտավոր են իրենց երեխաներին մեծացնելուն պատասխանատվությամբ մոտենալ և չարհամարհել նրանց:
- Ծնողներն իրավունք ունեն լիիրավ օգտվելու պաշտոնական կրթական համակարգից՝ իրենց երեխաների պահանջների, տաղանդի և արժանիքների համապատասխան:
- Ծնողները պարտավոր են կրթության հարցերում համագործակցել իրենց երեխաների դպրոցների հետ:
- Ծնողներն իրավունք ունեն իրենց երեխաներին վերաբերող ցանկացած տեղեկություն իմանալու կրթական հաստատություններից:
- Ծնողները պարտավոր են իրենց երեխաների դպրոցներին տրամադրել բոլոր այն տեղեկությունները, որոնք կապված են կրթական նպատակների համատեղ իրականացման գործընթացին:
- Ծնողներն իրավունք ունեն իրենց երեխաների համար ընտրելու այն կրթությունը, որն ամենից մոտ է իրենց համոզմունքներին և արժեքներին, որոնք կարևոր են համարում դաստիարակության համար:
- Ծնողները պարտավոր են գիտակից և իրազեկ ընտրություն կատարել իրենց երեխաների կրթության վերաբերյալ:
- Ծնողներն իրավունք ունեն ազդելու իրենց երեխաների դպրոցների կողմից տարվող քաղաքականության վրա:
- Ծնողները պարտավոր են անձնապես նվիրված լինել իրենց երեխաների դպրոցին, որը տեղական համայնքի կարևորագույն մասն է:
- Ծնողները և նրանց միությունները իրավունք ունեն ակտիվորեն տեղեկանալու բոլոր մակարդակներում կրթության վերաբերյալ պետական մարմինների կողմից վարվող քաղաքականության մասին:
- Ծնողները պարտավոր են կազմակերպել ժողովրդավարական ներկայացուցչական կազմակերպություններ բոլոր մակարդակներում՝ իրենց և իրենց շահերը ներկայացնելու նպատակով:



## Կրթական ծրագրի ուսուցչի աշխատակարգ

- Որպեսզի դպրոցի նոր կազմակերպումը ծնվի առօրյա իրականությունից, կրթական ծրագրում ընդգրկված դպրոցները և ուսուցիչները սկսում են աշխատել սույն ուղեցույցով:
- Կրթական ծրագրի մասնակից (մշակող և իրականացնող) ուսուցիչները (այսուհետ՝ մասնագետ) կաշխատեն 9.00-ից մինչև 16.00, իսկ շաբաթ օրը՝ 12.00-16.00: Ուսումնական պարապմունքներից ազատ ժամանակը մասնագետը կանցկացնի կրթական ծրագրի ընթերցարանում, կմասնակցի իր ընտրած մասնագիտական խմբի ու կրթական ծրագրի սեմինարի քննարկումներին, կմասնակցի Նոր դպրոցի սաների հավաքագրման աշխատանքներին:
- Մասնագետը դպրոցի տնօրենի սահմանած անհատական պլանով գործնականում կբարելավի օտար լեզուների իմացությունը, գործնականում կտիրապետի համակարգչին ու ինտերնետ կապին, յուրաքանչյուր շաբաթ երկու ժամից ոչ պակաս կօգտվի ինտերնետ կապից:
- Մասնագետը մասնագիտական խմբի կազմում կմշակի դպրոցի իր արհեստանոցի սխեման, կկազմի անհրաժեշտ իրերի, նյութերի ու սարքավորումների ցանկը, ջանքեր կգործադրի դրանց ձեռքբերման համար, կկազմի գործնական պարապմունքների ինքնուրույն (խմբային աշխատանք) առաջադրանքներ, քարտեզներ:
- Մասնագետը գործնականում կուսումնասիրի մյուս մասնագետների դասավանդման առաջավոր փորձը:
- Կրթական ծրագրի պատասխանատուները կկազմակերպեն ծրագրի ընթերցարանները մինչև 2004թ. փետրվարի 1-ը, մինչև 2004թ. հունիսի 30-ը դպրոցները կապահովվեն ինտերնետ կապով. մինչև 2004թ. փետրվարի 1-ը համակարգիչներից առանց արգելքի օգտվելու հնարավորությունը կունենա յուրաքանչյուր մասնագետ:
- Մասնագետները գործնականում կյուրացնեն Ջորջ Փոյայի «Մաթեմատիկական հայտնություն» աշխատության 14-րդ գլուխը, Ջ. Ռոդարու «Երևակայության քերականությունը», Մոնթեսորիի «Երեխայի տուն» և Ս. Ֆրենեի «Նոր ֆրանսիական դպրոց» աշխատությունները:
- Կրթական ծրագրի պատասխանատուները արդյունավետ ջանքեր կգործադրեն, որպեսզի յուրաքանչյուր մասնագետ (մասնագետների խումբ) կրթական ծրագրով հետազոտական աշխատանքների թեմա ունենա, օր առաջ սկսի այդ թեմայի կատարումը:
- Մասնագետները կվարեն աշխատաժամանակի պլանավորման ու նկարագրման քարտեր: Շաբաթը մեկ անգամ մասնագետը դպրոցի տնօրենի հետ քննարկի աշխատաժամանակի օգտագործման արդյունավետությունը:

«Նոր դպրոց» կրթական ծրագրի  
մոդուլ-դպրոցի ցուցանիշները

**Հաշվարկման հիմքում դրված են հետևյալ ցուցանիշները:**

1. Դասարանում երեխաների թիվը՝ 16-17:
2. Դպրոցում գործում է 6 դասարան (1-ից 6-րդ դասարաններ), յուրաքանչյուր դասարանից՝ մեկական:
3. Դպրոցում երեխաների թիվը՝ 100:
4. Կրթական ծրագրի ուսուցիչն աշխատում է շաբաթը 5 օր՝ 9<sup>00</sup>-16<sup>00</sup>, (շաբաթը 35 ժամ ծանրաբեռնվածությամբ):
5. Ուսուցչի շաբաթական աշխատաժամանակը բաշխվում է այսպես՝ 20-22 ժամ ուսուննական պարապմունքներ, 5 ժամ դաստիարակչական աշխատանքներ, 5 ժամ մասնագիտական զարգացում, 3-5 ժամ ուսուննահետազոտական գործունեություն:
6. Գործունեության բոլոր ձևերի համար ուսուցիչը վճարվում է տվյալ տարում պետական բյուջեով որոշված դրույքաչափով:
7. Կրթական ծրագիրը իրագործող ամեն մի դպրոց (դասարան) ունի տարեկան ծախսերի նախահաշիվ, որը գործադիր տնօրենի ներկայացմամբ հաստատում է կրթահամալիրի խորհուրդը:
8. Կրթահամալիրը ֆինանսավորման նոր կարգի համաձայն կրթական ծրագրի իրագործմանը մասնակցող դպրոցին (դասարանին) տրամադրում է ծրագրում ընդգրկված երեխաների բյուջետային հատկացումները:
9. Բյուջետային հատկացումները, ծնողական լրավճարները, կրթական ծրագրի մյուս հատկացումները կազմում են դպրոցի (դասարանի) բյուջեն:
10. Մոդուլ-դպրոցի ծնողական լրավճարների չափը դպրոցի (դասարանի) տնօրենը, հաշվապահը մինչև ս.թ. ապրիլի 15-ը ներկայացնում են կրթահամալիրի գործադիր տնօրենին՝ կրթահամալիրի խորհրդում հաստատելու համար:
11. 2004-2005 ուստարվա համար դպրոցի (դասարանի) գործունեության բերվող ֆինանսական մոտավոր ցուցանիշները քննարկվում են կրթական ծրագրի սեմինարում:
12. Դպրոցի (դասարանի) անհրաժեշտ ուսուննական տարածքների նորոգման և կահավորման, սովորողների տեղափոխման համար անհրաժեշտ գումարները դպրոցի տարեկան ծախսերի նախահաշվում արտահայտված չեն:

«Նոր դպրոց» կրթական ծրագիր  
Սողոմ դպրոցի տարեկան ծախսերի նախահաշիվ  
(ուղեցույց)

Աշակերտների թիվը – 100

Դասարանների թիվը - 6

	Դրույք	Դրույք քաչափ	Մեկ ամիս	Տարեկան	Բյուջետային	Ընդամենը
1. Աշխատավարձ ուսուցչական	9	60000	540000	6480000		
2. Տնօրեն	1	90000	90000	1080000		
3. Ուսքարտուղար	1	60000	60000	720000		
4. Տնտեսվար	1	30000	30000	360000		
5. Բանվոր	1	30000	30000	360000		
6. Պահակ	1	30000	30000	360000		
7. Առողջագետ	1	10000	10000	120000		
8. Հաշվապահ	1	15000	15000	180000		
Ընդամենը (այդ թվում վրաել)				9660000 18%		
<b>Տնտեսական ծախսեր</b>						
Էլեկտրաէներգիա			8000	96000		
Ջեռուցում դասասեն.				300000		
Ջեռուցում ծառայող.				200000		
Ջրի ծախս			3000	36000		
Աղբահանություն			4000	48000		
Դեռատիզացիա			5000	60000		
Կապ			5000	60000		
Տնտեսական ծախս			12000	144000		
Գրենական պիտույք.			18000	216000		
Գովազդ				100000		
Գիտելիքների գնահ.				150000		
Այլ ծախսեր			10000	120000		
Ընդամենը				1530000		
Բոլորը միասին				11190000		

Ըստ բյուջեի՝ 100 երեխա X 36060 դրամ = 3606000 դրամ:

11190000 – 3606000 = 7584000 դրամ:

7584000 : 10 : 100 = 7584 դրամ (մոտ. 14\$):

Այսպիսով՝ մեկ երեխայի ամսական լրավճարը կազմում է մոտ. 14 դոլար:

*Ծանոթություն:* Սովորողների տեղափոխման, դասարանների նորոգման և կահավորման, տեխնիկական միջոցների ձեռքբերման համար անհրաժեշտ գումարները նախահաշվում արտացոլված չեն:

«ՆՈՐ ԴՊՐՈՑ» ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Սողոմ-դպրոցի ուսումնական տարածքի նկարագրություն

- 50-54 քառ. մ մակերեսով լուսավոր, հարմարավետ վեց դասասենյակ

- 70-100 քառ. մ մակերեսով միջանցքներ՝ 3-ից 4 դասարանի համար
- ընթերցասրահ (30-36 քառ. մ)
- տնտեսուհու սենյակ (8-12 քառ. մ)
- հիգիենիկ սանհանգույց՝ մշտական ջրով, առանձին՝ տղաների, աղջիկների, ուսուցիչների համար
- մարզադահլիճ (12x12 քառ. մ)՝ երկու հանդերձարանով, ցնցուղներով
- թատերական (միջոցառումների) դահլիճ
- ինֆորմատիկայի կենտրոն (9 համակարգիչների համար, 30-36 քառ. մ)
- տեսասրահ (36-50 քառ. մ)
- բնագիտության լաբորատորիա (50-54 քառ. մ)
- ձեռարվեստ-կերպարվեստի սենյակ (50-54 քառ. մ)
- արհեստանոց (30-36 քառ. մ)
- յուրաքանչյուր երեխայի, ուսուցչի համար՝ զգեստապահարան, գրադարակ, աշխատանքային սեղան, աթոռ
- ներքին բակ – պարտեզ (150-200 քառ. մ)
- սրճարան (36-54 քառ. մ)

**«ՆՈՐ ԴՊՐՈՑ» ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ**

**ՀՀ «ՄԻՆԻԹԱՐ ՍԵՔԱՍՏԱՑԻ» ԿՐԹԱՅԱՄԱԼԻՐԻ**

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ՈՒ ԿՈՒՐՍԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԲՈԼՈՐ ՏԱՐԻՆԵՐԻ

ԴԻՊԼՈՄԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԹԵՄԱՆԵՐ

2003-2004 ՈՒՍԱՐԻ		
<i>N</i>	<i>ԹԵՄԱ</i>	<i>ՂԵԿԱՎԱՐ</i>
1	Դասի կազմակերպումը դպրոց-մանկապարտեզում Մարիա Մոնթեսորիի մեթոդիկայով	Աշոտ Բլեյան Մարիետ Սիմոնյան

2	Կրտսեր դպրոցի նյութական, տեխնիկական և մանկավարժական կազմակերպումն ըստ Ֆրենեի մանկավարժական մոտեցումների (գործունեության կազմակերպման ուղեցույց)	Աշոտ Բլեյան Սուսան Մարկոսյան
3	Ինքնագնահատման թղթապանակ (portfolio) մաթեմատիկայից մանկավարժական ուսումնարանի 3-րդ կուրսեցու համար	Գայանե Բեդիրյան
4	Ինքնագնահատման թղթապանակ (portfolio) մաթեմատիկայից 3-րդ դասարանցու համար	Գայանե Բեդիրյան
5	Հայոց լեզվից գիտելիքների ստուգման տարբերակներ 2-4-րդ դասարանցիների համար	Գևորգ Հակոբյան Արմինե Թովչյան
6	Տիկնիկային համալիր թատրոն	Կարեն Մկրտչյան Քնարիկ Աբովյան Անի Գևորգյան
7	Բնագիտական փորձերի կատարումն ու ներկայացումը նախագծման մեթոդի կիրառմամբ	Հասմիկ Նալբանդյան
8	Ներդպրոցական ամսագիրը որպես ուսումնական ռեսուրս	Աիդա Պետրոսյան Ռոբերտ Հովսեփյան
9	Խաղ-բեմականացումը որպես հոգեթերապևտիկ միջոց նախակրթարանում և կրտսեր դպրոցում	Ալինա Մանուկյան
<b>2002-2003 ՈՒՏԱՐԻ</b>		
1	Լեզվական ունակությունների ստուգման հարցարաններ 3-րդ դասարանի համար	Մարիետ Սիմոնյան
2	Հարցարաններ՝ կրտսեր դպրոցում մայրենի լեզվի ծրագրի յուրացումը ստուգելու համար	Մարիետ Սիմոնյան
3	Ծուղակներ պարունակող և կատակ խնդիրներ	Ռոբերտ Հովսեփյան
4	Բանավոր խոսքի մշակումը կրտսեր դպրոցում. ներկայացումներ և սցենարներ	Սուսան Մարկոսյան
5	Հավանականությունների տեսության տարրերը տարրական դպրոցում	Գայանե Բեդիրյան
6	Մանկական բնագիտական ամսագրի ստեղծում	Հասմիկ Նալբանդյան
7	Հոգեկան զարգացման հապաղմամբ երեխաների զարգացման առանձնահատկությունները	Ալինա Մանուկյան
8	Լեզվական ունակությունների ստուգումների հարցարան 1-ին դասարանի համար	Մարիետ Սիմոնյան
9	Ինքնագնահատման առաջադրանքներ մաթեմատիկայից 2-րդ և 3-րդ դասարանցիների համար	Գևորգ Հակոբյան
<b>2001-2002 ՈՒՍՏԱՐԻ</b>		

1	Կոմբինատորիկան տարրական դասարաններում	Գայանե Բեդիրյան
2	Կրտսեր դպրոցականի աճի բնութագիր	Գևորգ Հակոբյան
3	Դասարանական թերթերը կրտսեր դպրոցում	Գայանե Թերզյան
4	Ընթերցարան (համաշխարհային գրականության նմուշներ)	Մարիետ Սիմոնյան
5	Տրամաբանական պարադոքսներ	Ռոբերտ Հովսեփյան
6	Խաղային վարժությունները որպես կրտսեր դպրոցականի անձի զարգացման միջոց	Ալինա Մանուկյան
7	Վերացարկված ձևերը որպես ներըմբռնման արտահայտչամիջոցներ (նկարաչար՝ «Իրավիճակներ»)	Կարեն Մկրտչյան
<b>2000-2001 ուստարի</b>		
1	Տրամաբանական խնդիրները նախակրթարանում և տարրական դպրոցում	Ռոբերտ Հովսեփյան
2	Մանկական ստեղծագործությունների ալմանախ	Գայանե Թերզյան
3	Թատերական ներկայացումների սցենարներ	Մարինե Մկրտչյան Անի Գևորգյան
4	Լեզվական ունակությունների ստուգման հարցարաններ 1-3-րդ դասարանցիների համար	Մարիետ Սիմոնյան
5	Երեխայի հոգեբանական պատրաստությունը դպրոցական ուսուցմանը	Ալինա Մանուկյան
6	Տարրական դպրոցում խնդիրների լուծման մասին	Գայանե Բեդիրյան
7	ԺպՅրՍՈ՛ ֆվՓՈՍսՏոպՊՈ՛ Պս՛ վՈփՈսՖվՏո ՔՍՏսո ը ՈՐՎ՛վրՍՈՒՎ ՚ջօՍՏՎ ՏոցփպվՈ՛	Գայանե Յազիչյան
<b>1999-2000 ուստարի</b>		
1	Բնագիտական փորձերի կենտրոն կրտսեր դպրոցում	Հասմիկ Նալբանդյան
2	Պարզագույն տոպոլոգիական խաղերը նախակրթարանում	Ռոբերտ Հովսեփյան
3	Մայրենիի ընթերցարան 3-րդ և 4-րդ դասարանցիների համար	Մարիետ Սիմոնյան
4	Թվաբանական խնդիրների ժողովածու 5-րդ դասարանցիների համար	Գայանե Բեդիրյան
5	Երեխաների հետ, երեխաների համար	Նունուֆար Սմբատյան
6	Հայերեն բանավոր խոսքի մշակում	Սուսան Մարկոսյան
7	Երեխաների հաղորդակցման ունակությունների զարգացմանը նպաստող աշխատանքային գիրք-տետր 3-րդ և 4-րդ դասարանցիների համար	Գայանե Թերզյան
8	Երաժշտության դասավանդումը 2-րդ դասարանում	Մարինե Մկրտչյան
<b>1998-1999 ուստարի</b>		

1	Թվաբանական խնդիրների ժողովածու տարրական դպրոցի 4-րդ դասարանի համար	Գայանե Բեդիրյան
2	«Քարակույտեր» խմբի խաղերը և դրանց դասավանդումը տարրական դպրոցում	Ռոբերտ Յոսեփյան
3	ԻՈՒՎՈՑպսՖվՈ՝ ՈջոցՍՈ	Կարինե Տոնապետյան
4	ԹվաՍսՈրվՈ՝ ՐՈՈՏՑՈ ՍՈՍ ՐՐԿՊրՑՁՏ ՏոցփավՈ՝ տցրրՍՏՎց ՚ջօՍց	Գայանե Յազիչյան
5	Երաժշտության դասերն առաջին դասարանում	Մարինե Սկրտչյան
6	Բնագիտական փորձերը չորրորդ դասարանում	Հասմիկ Նալբանդյան
7	Մանուկների պարտեզ	Գայանե Նիկողոսյան
8	6-7 տարեկան երեխաների ֆիզիկական չափանիշների և հոգեբանական պատրաստվածության որոշումը	Սեդա Մելիքյան
9	Տարեգիրք	Մարիետ Սիմոնյան
10	Ընթերցարան կրտսեր դպրոցականների համար՝ նրան հետաքրքրող թեմաներով	Սուսան Մարկոսյան
11	Տնային աշխատանքներ կրտսեր դպրոցականների համար	Վիդա Պետրոսյան
12	Իմացումի հրճվանք	Ալլա Մելիքյան
<b>1997-1998 ուստարի</b>		
1	Թարգմանական գեղարվեստական և վավերագրական նյութերով կազմված ընթերցարան կրտսեր դպրոցականների համար	Սուսան Մարկոսյան
2	Լեզվական-տրամաբանական խաղերի ժողովածու կրտսեր դպրոցականների համար	Ռոբերտ Յոսեփյան
3	Գեղարվեստական ստեղծագործությունների վերլուծությանն ուղղված հարցարան	Մարիետ Սիմոնյան
4	Մաթեմատիկական խնդիրների ժողովածու 1-3-րդ դասարանցիների համար	Գայանե Բեդիրյան
5	Հաղորդակցության մանկավարժությունը կրտսեր դպրոցում	Գայանե Թերզյան
6	Խաղավարի ճամպրուկ	Կարեն Սկրտչյան
7	Ռիթմի և լսողության զարգացման վարժությունների համակարգը և դրա կիրառումը դպրոցի երաժշտության դասերի ժամանակ	Մարինե Սկրտչյան
8	“ԾՈՔ ցփպովՈՒ” խ. ՉՏարՑՏո	Գայանե Յազիչյան
9	«Փորձերի ժողովածու» կրտսեր դպրոցականների համար	Հասմիկ Նալբանդյան
<b>1996-1997 ուստարի</b>		
1	Դեկորատիվ նկարչության դասավանդումը տարրական դասարաններում	Գոհար Սանոյան

2	Պուշկինի հեքիաթները	Օլգա Եղիզարյան
3	Անդերսենը և Երեխաները	Օլգա Եղիզարյան
4	Ընթերցարան 3-4-րդ դասարանցիների համար	Սուսան Մարկոսյան
5	4-րդ դասարանցիների գիտելիքների ստուգման հարցաշարերի կազմում	Մարիետ Սիմոնյան
6	Կրտսեր դպրոցում մաթեմատիկայից աշակերտների գիտելիքների ստուգման համար առաջադրանքների մշակում	Գևորգ Հակոբյան
7	Երեխաների ստեղծագործությունների ավանախ	Նաիրա Նիկողոսյան
8	Աշխատանքային երգեր ու պարեր	Ռուդիկ Հարոյան
9	Զատիկի տոնի կազմակերպումն ուսումնական պրոցեսում	Ռուդիկ Հարոյան
10	Մանկական խաղերգերի ժանրային առանձնահատկությունները	Մարգարիտ Սարգսյան
11	Հայ հոգևոր երգի ծագման և զարգացման պատմական ակնարկ	Լեյլա Կարապետյան
12	Ավանդական խաղեր	Ռուդիկ Հարոյան
13	Հոգեբանական թղթախաղեր	Ռոբերտ Հովսեփյան
<b>1995-1996 ուստարի</b>		
1	Պարերգի ժանրը և պարերգի ուսուցումը կրտսեր դպրոցում	Լեյլա Կարապետյան
2	Կրտսեր դպրոցի 3-րդ դասարանի ավանդական պարի դասավանդման մեթոդները	Ռուդիկ Հարոյան
3	«Հարցաքննություն» խմբի խաղեր	Ռոբերտ Հովսեփյան
4	Տրամաբանական խաղերը կրտսեր դպրոցում	Ռոբերտ Հովսեփյան
5	Կրտսեր դպրոցի 3-4-րդ դասարանի ընթերցարան	Սուսան Մարկոսյան
6	Մանուկների ստեղծագործությունների տարեգիրք	Մարիետ Սիմոնյան
7	Մաթեմատիկայի ծրագրի համեմատական փոփոխությունները տարրական դասարաններում	Գևորգ Հակոբյան
8	ԾՈՐՑԱՐՐՑԶՏ տՌՐՈՑԱԿԱԿՐ Զ ՌԶՏՈՐՈՋԱՎՈՒ չԿՐՏՈՎՖ Զ ՖՍՐՑՐԿՎՈՒՖՎՏՆ Ա՛ՆՏԶՎՏՆ ՐՈՑԳՈՓՈՒ	Իրինա Բաղդասարյան

**«Նոր դպրոց» կրթական ծրագիր  
Կրթահամալիրի նախասիրական դպրոցների մասին  
տեղեկանք**

1. Կրթահամալիրի երաժշտության դպրոցի 1-7-րդ դասարաններում սովորում են 94 երեխաներ: Երաժշտության դպրոցը գործում է 1989թ.-ից, ունի առանձնացված հարկաբաժին Մայր դպրոցի շենքում, 7-ամյա երաժշտական դպրոցի ծրագրի իրագործման համար



անհրաժեշտ բոլոր պայմանները (համերգային դահլիճ, երաժշտական գործիքներ, խմբային ու անհատական պարապմունքի կաբինետներ, տեխնիկական ուսուցման միջոցներ): Դպրոցի մասնագետներն ունեն մասնագիտական կրթություն: Դպրոցն ունի հայտնի մանկական երգչախումբ, որն այս տարի թողարկում է 18 երգից կազմված ձայներիզ:

2. Կրթահամալիրի գեղարվեստի դպրոցը գործում է 1989թ.-ից, առանձին շենքում: Դպրոցն ունի դիզայնի, գծանկարի, գունանկարի, գրաֆիկայի, քանդակի, խեցեգործության, մոդելավորման, փայտի փորագրության և մետաղագործության, թելի ու կարի գեղարվեստական մշակման կահավորված ու հարմարավետ արհեստանոց-արվեստանոցներ, ցուցասրահ, արվեստի հարուստ գրականությամբ և տեսաֆիլմերով գրադարան, տեսաձայնագրիչ, բարձրակարգ համակարգչային տեխնիկա, խնամված ներքին ու արտաքին բակ: Դպրոցում աշխատում են գործող, հանրությանը հայտնի արվեստագետներ: Դպրոցն ունի մասնաճյուղեր կրթահամալիրի հիմնական դպրոցում և դպրոց-մանկապարտեզում: Դպրոցը բազա է ծառայել և ծառայում կրթահամալիրի հանրակրթական դպրոցների և մանկավարժական ուսումնարանի համար կերպարվեստ, դիզայն-աշխատանք հանրակրթական առարկաների և մասնագիտական դասընթացների կազմակերպման համար:

3. Կրթահամալիրի մարզադպրոցն ունի բասկետբոլի, վոլեյբոլի, սեղանի թենիսի, ֆուտբոլի, թեթև ատլետիկայի, մարմնամարզության և ընդհանուր ֆիզպատրաստության բաց և ծածկած մարզադահլիճներ, մարզահրապարակներ: Այսպիսի բազան և մարզիչ-մասնագետների առկայությունը թույլատրում են ակումբային սկզբունքով կազմակերպել կրթահամալիրի հանրակրթական դպրոցների 5-10-րդ դասարանների ֆիզկուլտուրայի պարապմունքները: Մայրաքաղաքի դպրոցականների մարզական առաջնությունում կրթահամալիրի թիմերը վերջին երկու տարում գրավում են 1-ին տեղերը:

4. Շախմատի մասնագիտացված դպրոցը գործում է 1992թ.-ից: Տեղավորված է «Մեխակ» կրթամշակութային կենտրոնի շենքում: Դպրոց հաճախող երեխաների թիվն ամեն ամիս աճում է, այսօր սովորում են 100-ից ավելի 6-14 տարեկան երեխաներ: Կրթահամալիրի կրտսեր դպրոցում տարիներ շարունակ դասավանդվում է շախմատ հանրակրթական առարկան: Շախմատի դպրոցի սաները մինչև 14 տարեկան երեխաների երևան քաղաքի և հանրապետության 2004թ.-ի առաջնությունում գրավել են 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ մրցանակային տեղեր:

5. Ինֆորմատիկայի դպրոց հաճախում են 6-16 տարեկանները: Դպրոցը տեղավորված է «Մեխակ» կրթամշակութային կենտրոնում: Դպրոցն ունի արագագործ մշտական ինտերնետային կապ: Ինֆորմատիկայի դպրոցի բազայի վրա համակարգչային գրագիտություն են ստանում կրթահամալիրի հանրակրթական դպրոցների սովորողները՝ սկսած 1-ին դասարանից, իսկ ցանկացողները նաև համապատասխան նախամասնագիտական ուսուցում են անցնում:

6. Կրթահամալիրի բնասերի դպրոցն ունի տնկարան, ուսումնափորձնական հողամաս և ջերմոցային տնտեսություն:

## **ՏԵՂԵԿԱՆՔ**

### **ՀՀ ԿԳ նախարարության «Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր» փորձարարական-հետազոտական միավորման մանկավարժական նորարարության մասին**

Լրացավ «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի կազմավորման 20 տարին:

1984թ. բացված Երևանի նախկին Շահումյանի շրջանի թիվ 183 միջնակարգ դպրոցը 1987թ. վերածվեց ՀԽՍՀ լուսավորության նախարարության դպրոց-մանկապարտեզ հանրապետական ուսումնադաստիարակչական փորձարարական համալիրի, որը՝

1989թ. վերակազմավորվել է որպես ՀԽՍՀ ժողկրթության նախարարության «Մխիթար Սեբաստացի» փորձարարական-հետազոտական միավորման,

1992թ. ՀՀ բարձրագույն կրթության և գիտության նախարարության՝ Երևանի «Մխիթար Սեբաստացի» փորձարարական-հետազոտական հանրակրթական միավորման,

1994թ. ՀՀ կրթության և գիտության նախարարության՝ Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր փորձարարական-հետազոտական միավորում պետական ձեռնարկության,

2003թ. ՀՀ կրթության և գիտության նախարարության՝ Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի փորձարարական-հետազոտական միավորում պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ կրթահամալիր):

Կրթահամալիրի նպատակները, առարկան, խնդիրները, կառուցվածքը և իրավասությունները որոշված են ՀՀ կառավարության 10.05.1990թ. թիվ 216 և 2003թ. փետրվարի 27-ի թիվ 361-Ն որոշումներով, ՀՀ ԿԳ նախարարի 25.04.2003թ. թիվ 259-Ն հրամանով հաստատված և 28.04.2003թ. պետական գրանցում ստացած կրթահամալիրի կանոնադրությամբ:

### **Կրթահամալիրի կրթական օբյեկտները**

Կրթահամալիրի պետական մանկավարժական ուսումնարանը, վարժարանը, երաժշտության դպրոցը, մարզադպրոցը, հեռուստալրագրողի դպրոցը, պարի և թատերական դպրոցները, լեզուների ուսուցման կենտրոնը, գրադարանը, գիտելիքների գնահատման, տեխնիկական մանկավարժական հետազոտական-մեթոդական կենտրոնները զբաղեցնում են նախկին թիվ 183 միջնակարգ դպրոցի շենքը /Ա. Բաբաջանյան 25, հեռ. 74.11.12/:

Կրթահամալիրի դպրոց-մանկապարտեզը զբաղեցնում է ՀԱ Բ-4 թաղամասի նախկին թիվ 119 մանկապարտեզի շենքը /Ա. Բաբաջանյան 38/1, հեռ. 74.21.72/:

Կրթահամալիրի Հիմնական դպրոցը զբաղեցնում է ՀԱ Բ-1 թաղամասի նախկին թիվ 11 մանկապարտեզի շենքը /Ա. Բաբաջանյան 47/1, հեռ. 74.43.80/:

Կրթահամալիրի Գեղարվեստի խորացված հանրակրթական դպրոցը և Գեղարվեստի դպրոցը զբաղեցնում են ՀԱ Բ-1 թաղամասի նախկին թիվ 295 մանկապարտեզի շենքը /Ռաֆֆու 69/1, հեռ. 73.52.10/:

Կրթահամալիրի Արհեստագործական դպրոցը զբաղեցնում է ՀԱ Բ-1 թաղամասի նախկին թիվ 309 մանկապարտեզի շենքը /Զ. Անդրանիկի 92/1, հեռ. 74.00.22/:

Կրթահամալիրի Մ. Գանյանի անվան հանրակրթական դպրոցը զբաղեցնում է Երևանի Գունավոր տպարանի նախկին մանկապարտեզի շենքը /Ա. Իսակովի 52/6, հեռ. 74.42.81/:

Կրթահամալիրի Շախմատի և Ինֆորմատիկայի դպրոցները զբաղեցնում են նախկին «Մեխակ» ռեստորանի շենքը /Ռաֆֆու 57/:

Կրթահամալիրի Բնասերի դպրոցը զբաղեցնում է ՀԱ Բ-4 թաղամասի նախկինում անօգտագործելի հողատարածքը /Ա. Բաբաջանյան 38/2, հեռ. 74.21.72/:

Կրթահամալիրի Արատեսի «Դպրոց բնության գրկում» օջախը զբաղեցնում է Վայոց Ձորի մարզի Եղեգիսի կիրճի նախկին Արատես գյուղի տարածքը, Վայոց Ձորի մարզ, Յերմոն համայնք, Արատես:

### **Կրթահամալիրի փորձարարական-հետազոտական գործունեության հիմնական արդյունքները**

Կրթահամալիրի փորձարարական հետազոտական գործունեության, կրթահամալիրի ուսուցիչների ներուժի, նրանց վերապատրաստման և վարաորակավորման, կրթահամալիրի իրականացրած մանկավարժական գիտափորձի և նորարարական կրթական ծրագրերի մասին համառոտ կարելի է տեղեկանալ՝ կարդալով ՀՀ ԿԳՆ կրթական ծրագրերի կենտրոնին ներկայացված դպրոց-կենտրոնի հայտում (էլեկտրոնային կրիչի վրա):

Կրթահամալիրի 15-ամյա գործունեության արդյունքում ստեղծվել է արդյունավետ գործող նախադպրոցական, հանրակրթական, միջին մասնագիտական, լրացուցիչ կրթական ծրագրեր իրականացնող հաստատությունների կառուցվածքա-բովանդակային յուրահատուկ միավորում, որը ուսուցողական նոր միջավայր է ոչ միայն սովորողների, այլ նաև սովորեցնողների ընդունակությունների դրսևորման ու տաղանդի զարգացման համար: Մշակվել ու փորձարկվել են ուսումնական տարբեր հաստատությունների (նախակրթարան, դպրոց-մանկապարտեզ, կրտսեր դպրոց, վարժարան, արհեստագործական դպրոց) գործունեության մանկավարժական, ֆինանսական, տեխնիկական կազմակերպման ձևերը, մշակվել ու փորձարկվել են հանրակրթական դպրոցների ուսումնական պլանների, ուսումնական գործունեության, մայրենի լեզվի, ֆիզկուլտուրայի, կերպարվեստի, ձեռքի աշխատանքի, գծագրության, դպրոցական պարտադիր ու սովորողի ընտրությամբ առարկաների կազմակերպման սկզբունքորեն նոր ձևեր, ներդրվել է ուսուցիչների անընդհատ կրթության և ինքնուրույն որոնողական աշխատանքի կազմակերպման նոր համակարգ:

Կրթահամալիրի ուսուցիչների ուսումնական հետազոտական գործունեության արդյունքում ստեղծվել են (հրատարակված են) շուրջ 50 անուն դասագիրք, 25 անուն ուսումնական ձեռնարկ, 20 մեթոդական ուղեցույց, 30 առարկայական և բազմաթիվ այլ ծրագրեր, այլ ուսումնական գրականություն, մանկական, մանկավարժական թերթեր, հանդեսներ, ամսագրեր (ցանկը՝ էլեկտրոնային կրիչի վրա): 2004թ. թողարկվել է կրթահամալիրի երաժշտության դպրոցի երգչախմբի ձայներիզը (CD):

Կրթահամալիրի 115 ուսուցիչներ 2001, 2004թթ ընդգրկվել են «Յունիսեֆ», «Այրեքս», «Քայլ առ քայլ», «Հույսի կամուրջ», «Առաքելություն արևելք», «Փրոջեքթ Հարմոնի» կազմակերպությունների սեմինարներին և ստացել համապատասխան վկայագրեր:

### **Կրթահամալիրում իրագործվող փորձարարական ծրագրեր և մանկավարժական գիտափորձ**

2004-2005 ուստարում կրթահամալիրն իրականացնում է (շարունակում է իրականացնել)՝

- «Նախակրթարանների ուսումնադաստիարակչական ծրագրերի մշակումը և փորձարկումը» հանրապետական ծրագիրը (տես ՀՀ ԿԳ նախարարի 28.07.04թ. թիվ 566 Ա-Ք հրամանը և հաստատած ծրագիրը, հավելված 3, էլեկտրոնային կրիչի վրա).
- ներառական կրթության հանրապետական ծրագիր.
- օժտված (արտակարգ ընդունակություններ դրսևորած) երեխաների կրթության ծրագիրը.
- «Անհատականացված ուսուցման և ուսուցողական նոր միջավայրի ստեղծման» ծրագիր.

(ՀՀ միջնակարգ կրթության պետական նոր չափորոշիչով նախատեսված արտակարգ ընդունակություններ ունեցող սովորողների ուսուցումն առավել բարենպաստ կազմակերպելու, այլընտրանքային ծրագրերով ու մեթոդներով ուսուցում, մանկավարժական գիտափորձ իրականացնելու համար ՀՀ ԿԳՆ կրթության ազգային ինստիտուտի մասնագետների հետ համատեղ մշակել և կրթահամալիրի հանրակրթական դպրոցներում ՀՀ ԿԳ նախարարության հանրակրթության վարչության համաձայնությամբ 2004-2005 ուսումնական տարում կիրառում է ուսումնական նոր պլաններ, որոնցով կրտսեր, միջին և ավագ դասարաններում սովորողի ազատ ընտրությամբ պարտադիր նախասիրական պարապմունքների և մասնագիտացված դասընթացների միջոցով ապահովվում է յուրաքանչյուր սովորողի անհատական կրթական պատվերը: Կրթության ազգային ինստիտուտի մասնագետների հետ կրթահամալիրի հետազոտական-մեթոդական կենտրոնում մշակվում և փուլ առ փուլ փորձարկվում են 30-ի չափ դասընթացների ծրագրեր (հավելված 4):

- ՀՀ ԿԳՆ կրթության ազգային ինստիտուտի համագործակցությամբ՝ կրթահամալիրի խորհրդի հաստատած «Նոր դպրոց» կրթական ծրագիրը՝ հետևյալ բաղկացուցիչներով (հավելվածը՝ էլեկտրոնային կրիչով)՝

ընդհանուր և մասնագիտական դասընթացներ ապահովող նոր որակի քառամյա միջնակարգ դպրոցի ծրագիր,

1-12 տարեկանների կրթության նոր հաստատության՝ դպրոց-մանկապարտեզի ծրագիր,

6-ամյա նոր կրտսեր դպրոցի ծրագիր,

մինչև 12 տարեկան երեխաների կրթության մասնագետի պատրաստման և վերապատրաստման,

վերաորակավորման ծրագիր,

12-ամյա միջնակարգ դպրոցի Ավագ դպրոցում հիմնական կրթության հիմքով միջին մասնագիտական կրթության ծրագիր,

գեղագիտական դաստիարակության ծրագիր,

սովորողների ծնողների իրավունքների և պարտականությունների ապահովման ծրագիր,

սովորողների հանրօգուտ աշխատանքի կազմակերպման ծրագիր,  
ուսուցիչների հետազոտական աշխատանքների կազմակերպման ծրագիր,  
սովորողների գիտելիքների գնահատման ծրագիր.

- Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի կամ հավատարմագրված ոչ պետական ԲՈՒՀ-ի հետ համատեղ՝ միջին մասնագիտական կրթության՝ կրթահամալիրի ուսուցիչների երկամյա վերաորակավորման ծրագիրը.
- որպես ՀՀ կրթական ծրագրերի կենտրոնի դպրոց-կենտրոն՝ Մալաթիա-Սեբաստիա համայնքի ուսուցիչների և նախակրթարանի ուսուցիչների վերապատրաստման ծրագիրը.
- ՀՀ ԿԳ նախարարության կրթական ծրագրերի կենտրոնի հետ համատեղ՝ «Սովորողների և ուսուցիչների տեղեկատվական հաղորդակցության տեխնոլոգիաների և ներդրման» ծրագիրը (հավելվածը՝ էլեկտրոնային կրիչով).
- «Փրոջեքթ Հարմոնի» կազմակերպության հետ համատեղ՝ սովորողների և ուսուցիչների ուսուցումը և կատարելագործումը ինտերնետի և համակարգչի միջոցով.
- ՀՀ կառավարությանն առընթեր ֆիզկուլտուրայի և սպորտի կոմիտեի համագործակցությամբ՝ «Ֆիզդաստիարակության նոր ծրագիրն ու նոր կազմակերպումը հանրակրթական դպրոցում» ծրագիրը.
- «Ռազմագիտությունն առարկայի կազմակերպումը նախաբանակային ճամբարում» ծրագիրը.
- Հայաստանի զարգացման ժառանգությունների հետ համատեղ՝ «Համակարգիչը դասարանում» ծրագիրը.
- Մալաթիա-Սեբաստիա համայնքի հետ համատեղ՝ «Հանրակրթության կազմակերպումը կրթական պարտեզում» ծրագիրը.
- ՀՀ ԿԳ նախարարության կրթության ազգային ինստիտուտի հետ համատեղ՝ «Սովորեցնողի սովորելը որպես ուսուցչի անընդհատ կրթություն» ծրագիրը:

#### **Կրթահամալիրի պետական մանկավարժական ուսումնարանի մասին**

ՀՀ ԿԳ նախարարի՝ 17.07.2004թ. թիվ 523-Ա/Ք հրամանով կրթահամալիրը ստացել է գործունեության թույլտվություն (հավելված 6): Կրթահամալիրի կազմում մանկավարժական ուսումնարանը գործում է 1993թվականից:

ՀՀ ԿԳ նախարարի հրամանով կրթահամալիրը, կրթահամալիրի մանկավարժական ուսումնարանը 2004-2005 ուստարում մասնագետներ է պատրաստում՝ 3012-Դասավանդումը տարրական դասարաններում, 0313-Նախադպրոցական կրթություն, 0307-Ֆիզիկական կուլտուրա և սպորտ, 0310-Երաժշտական կրթություն, 0515-Զարդարվեստ-կիրառական արվեստ և ժողովրդական արհեստների մասնագիտությունների գծով:

Ամեն տարի մանկավարժական ուսումնարանի լավագույն շրջանավարտներն ընդունվում են կրթահամալիրի դպրոցներում: